ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԱՓԿ–2026

ք. Երևան 20 02 2026 թ.

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ ի դեմս ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի (այսուհետ՝ պետական մարմին), ով գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդուարդ Պետրոսյանի (այսուհետ՝ կազմակերպություն), ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» առ 04 դեկտեմբերի Հայաստանի Հանրապետության օրենքը, ՀՀ կառավարության առ 25 դեկտեմբերի 2025 թվականի N 1910-Ն որոշումը, օրենքի և որոշման 1177 դասիչով սահմանված «Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպում» ծրագրի իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով 2026թ. հունվարի 1-ից մինչև 2026թ. դեկտեմբերի 31-ը կազմակերպությանը հատկացնել «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության առ 25 դեկտեմբերի 2025 թվականի N 1910-Ն որոշմամբ սահմանված 306 676 900 (երեք հարյուր վեց միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը, «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման N 02 բաժնի N 05 խմբի N 01 դասի գծով հաստատված հատկացումներից: Կազմակերպությունը պարտավորվում է իրականացնել «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության առ 25 դեկտեմբերի 2025 թվականի N 1910-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 1177 ծրագրի 11001 միջոցառումը (այսուհետ՝ ծրագիր), և հատկացումներն օգտագործել Կազմակերպության 2026թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի պահպանման ծախսերի նախահաշվին համապատասխան:

1.2. Ծրագրով նախատեսված կազմակերպության պահպանման ծախսերի նախահաշիվը ներկայացված է սույն պայմանագրի հավելված 1-ում, որը սույն պայմանագրի անբաժանելի մաս է:

1.3. Ծրագրով նախատեսված կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառման արդյունքային չափաքանակները/ցուցանիշները ներկայացված են սույն պայմանագրի հավելված 2-ում, որը սույն պայմանագրի անբաժանելի մաս է:

1.4. Տարեկան պլանի միջոցառումների իրականացման կազմակերպության տարեկան պլանը (այսուհետ՝ Տարեկան պլան) ներկայացված է սույն պայմանագրի հավելված 3-ում, որը սույն պայմանագրի անբաժանելի մաս է:

Պետական մարմնի համաձայնությամբ Տարեկան պլանով նախատեսված վտանգավոր տարածքները կարող են վերանայվել, եթե ՀՀ կառավարության առ 23 ապրիլի 2014թ. 454-Ն որոշման հավելվածներ 7 և 11-ի չափորոշիչներով իրականացվող հետազոտության գործողությունների արդյունքում նվազեցման/կրճատման ենթակա վտանգավոր տարածքներում հայտնաբերվեն հողային ականներ և այդ տարածքներն ենթակա լինեն ականազերծման համաձայն 454-Ն որոշման հավելված 10-ի (մաքրում) պահանջների:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի.

2.1.1. պահանջելու, որ կազմակերպության գործունեությունը համապատասխանի ՀՀ օրենսդրության և Տարեկան պլանի պահանջներին, ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

2.1.2. Տարեկան պլանին, ՀՀ կառավարության առ 17 փետրվարի 2011թ. N 143-Ն, առ 08 սեպտեմբերի 2011թ. N 1283-Ա և առ 23 ապրիլի 2014թ. N 454-Ն որոշումներով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ չընդունել իրականացված աշխատանքները և մատուցված ծառայությունները՝ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.3. Առանց իրականացված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունն ժամանակին չի սկսում Տարեկան պլանի իրականացումը կամ Տարեկան պլանի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում, չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Տարեկան պլանով նախատեսված աշխատանքների և մատուցվող ծառայությունների իրականացման ժամկետները (դրանց իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված աշխատանքները և մատուցված ծառայությունները չեն համապատասխանում Տարեկան պլանով և ՀՀ կառավարության որոշումներով սահմանված պահանջներին:

2.1.4. Սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում՝ պահանջելու իրեն հանձնել անավարտ աշխատանքների և ծառայությունների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի.

2.2.1. պահանջելու, որ առաջադրված խնդիրները համապատասխանեն ՀՀ օրենսդրության և «Հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպում» Տարեկան պլանի պահանջներին,

2.2.2. իրականացված աշխատանքների և մատուցված ծառայությունների արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.3. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը, պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները, վիճարկել անհամաձայնությունները ՀՀ դատական ատյաններում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է.

2.3.1. Տարեկան պլանի շրջանակներում ապահովել հումանիտար հակաականային գործունեությունը սահմանող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը:

2.3.2. Աջակցել կազմակերպությանը Տարեկան պլանի իրականացման ընթացքում:

2.3.3. Կատարել Տարեկան պլանի (առանձին աշխատանքների և մատուցվող ծառայությունների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ:

2.3.4. Իրականացնել Տարեկան պլանով նախատեսված այլ աշխատանքներ:

2.3.5. Իրականացված աշխատանքների և մատուցված ծառայությունների մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված աշխատանքները և մատուցված ծառայությունները համապատասխանում են Տարեկան պլանի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է.

2.4.1. Տարեկան պլանի շրջանակներում ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ հումանիտար հակաականային գործունեության առարկայի, նպատակների և ազգային չափորոշիչների պահանջների կատարումը:

2.4.2. Իրականացնել Տարեկան պլանի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում:

2.4.3. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Տարեկան պլանով և/կամ սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2.4.4. Կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

2.4.5. Սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Տարեկան պլանի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն:

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Տարեկան պլանի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին աշխատանքների և մատուցվող ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները պատճառաբանված գրավոր հիմնավորմամբ չընդունվելու դեպքում՝ անվճար, պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4.8. Տարեկան պլանի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Պայմանագրով սահմանված կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում՝ դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.10. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների և մատուցվող ծառայությունների տարեկան արդյունքներն ընդունվելուց հետո առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Ընդ որում՝ սույն պարբերությամբ սահմանված պայմանը նախատեսվում է նաև տվյալ բյուջետային տարվա ընթացքում կնքվելիք պայմանագրերում:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Տարեկան պլանի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության, մասնավորապես՝ հումանիտար հակականային գործունեության առարկայի, նպատակների և ազգային չափորոշիչների պահանջների կատարումը և առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և/կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ, որոնք պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության ականազերծման գործողությունների ազգային մարմնի լիազորություններին և իրավասություններին:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Տարեկան պլանի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Տարեկան պլանին առնչվող փաստաթղթեր և նյութեր՝ առանց միջամտելու կազմակերպության գործունեությանը:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը, ժամկետները և հաշվետվողականությունը

4.1. Դրամաշնորհը տրամադրվում է համաձայն սույն պայմանագրի 1.1. կետի, մեկ տարի ժամկետով՝ 2026թ. հունվարի 1-ից մինչև 2026թ. դեկտեմբերի 31-ը, 306 676 900 (երեք հարյուր վեց միլիոն վեց հարյուր յոթանասունվեց հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով՝ ներառյալ հարկերը:

Դրամաշնորհը կազմակերպությանը տրամադրվում է համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից հաստատված «Բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի 01.01.2026թ. - 31.12.2026թ. նախահաշվի»՝ կազմակերպության գանձապետական հաշվին անկանխիկ ձևով փոխանցելու միջոցով:

4.2. Կազմակերպությունը Տարեկան պլանով իրականացված աշխատանքների և մատուցված ծառայությունների մասին հաշվետվությունները ներկայացնում է եռամսյակը մեկ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 3-րդ աշխատանքային օրը:

4.3. Դրամաշնորհի վճարումները կատարվում են ՀՀ կառավարության առ 25 դեկտեմբերի 2025թ. N 1910-Ն որոշման հավելված 5-ի աղյուսակ 1-ի 1177 դասիչով սահմանված բյուջեի ծախսերի եռամսյակային համամասնությունների համաձայն:

Ընդ որում՝ դրամաշնորհի առաջին եռամսյակի վճարումները կատարվում են կանխավճարի տեսքով, սույն պայմանագիրը ստորագրելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Հաջորդող 2-րդ և 3-րդ եռամսյակների վճարումները կատարվում են Տարեկան պլանով իրականացված աշխատանքների և մատուցված ծառայությունների մասին հաշվետվություն ներկայացնելու օրվան հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում: Այդ ժամանակահատվածում պայմանագրի 8.6. կետում սահմանված պատասխանատու ստորաբաժանման կողմից 4 աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվության արդյունքներով տրվում է միջոցառումների իրականացման վերաբերյալ եզրակացություն:

Բացասական եզրակացության դեպքում՝ մերժման պատճառաբանության հետ միասին, վերադարձվում են կազմակերպությանը:

4-րդ եռամսյակի հաշվետվությունը ներկայացվում է մինչև դեկտեմբերի 18-ը ներառյալ:

4.4. Հաշվետվությունների անբաժանելի մաս են հանդիսանում կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման հավաստագրերը, հանձնման-ընդունման վկայականները, իրազեկման հաստատված ձևաթղթերը, որոնք նեռառում են՝

- աշխատանքները կամ ծառայությունները ընդունող պետական մարմնի/կազմակերպության կամ տեղական ինքնակառավարման մարմինների անվանումները,
- կատարման ժամկետները և ծավալները,
- կատարված աշխատանքների նկարագրությունը,
- պետական մարմնի/կազմակերպության պատասխանատու անձի կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի ստորագրությունը և կնիքը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կազմակերպությունը վճարում է տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը դրանով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.2. Սույն պայմանագրով և Տարեկան պլանով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում՝ պետական մարմինը պարտավորվում է փոխհատուցել կազմակերպությանը հասցված վնասը և վճարել տուգանք՝ հասցված վնասի ընդհանուր գնի 0,5 տոկոսի, և տույժ՝ 0,05 տոկոսի չափով:

5.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

5.4. Պայմանագրի 4.3. կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված կանխավճարի մարումն իրականացվում է եռամսյակային հաշվետվությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:

5.5.Պայմանագիր կնքած կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած կազմակերպությունը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Կողմերը ազատվում են պայմանագրային պարտավորությունների նկատմամբ մասնակի կամ լրիվ չկատարելու համար պատասխանատվությունից, եթե այդպիսի անգործունակությունը պայմանավորված է ֆորս մաժորային հանգամանքներով, որոնք առաջացել են սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո, և որոնք կողմերն ի վիճակի չեն եղել կանխատեսել կամ կանխել:

Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, եղանակային անբարենպաստ այլ պայմանները, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, որոշումները և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամիս և ավելի տևողությամբ, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.4. Կազմակերպությունը Տարեկան պլանի շրջանակներում անմիջական պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հումանիտար ականազերծման, հումանիտար հակաականային գործունեության առարկայի, նպատակների, ազգային չափորոշիչների, որակի կառավարման, հումանիտար ականազերծման ոլորտի ականային պատահարների կանխարգելման, անվտանգային, բնապահպանական պահանջների կատարման և դրանց ոչ պատշաճ կատարման դեպքում առաջացող հետևանքների համար:

8.5. Կողմերը հաստատում են, որ պայմանագիրը կնքելու պահին նրանք տեղյակ չեն որևէ պայմանի մասին, ըստ որի նրանք իրավասու չեն կամ չեն կարող կնքել կամ իրականացնել պայմանագիրը:

8.6. Որպես սույն պայմանագրի իրականացման պետական մարմնի պատասխանատու (համակարգող) ստորաբաժանում սահմանվում է ՀՀ պաշտպանության նախարարության գործերի կառավարչությունը:

8.6.1. Պատասխանատու ստորաբաժանումը.

1) գործում է մինչև պայմանագրով կողմերի համար սահմանված պարտավորությունների ամբողջական կատարումը,

2) հետևում է պայմանագրի կողմի պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացին և դրա արդյունքներով ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ՝ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ,

3) պետական մարմնի ղեկավարին ներկայացնում է եզրակացություն՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունելու մասին: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, եթե կատարված աշխատանքները համապատասխանում են պայմանագրի պայմաններին:

4) պայմանագրի կետ 3-ի համաձայն իրականացնել մոնիթորինգ, այդ թվում՝

ա. կազմակերպությունից գրավոր պահանջել և ուսումնասիրել ականազերծված/հետազոտված տարածքների և իրազեկման վերաբերյալ փաստաթղթերը (տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հաստատված հավաստագիր, հանձնման և ընդունման վկայական՝ մաքրված տարածքի IMSMA քարտեզով և GPS կորդինատներով, իրազեկման հաստատված ձևաթղթեր, ուսումնասիրման համար անհրաժեշտ այլ ձևաչափեր),

բ. անհրաժեշտության դեպքում, կազմակերպության հետ փոխգործակ-ցությամբ, իրականացնել վերահսկիչ այցեր:

8.7. Պայմանագիրը կնքվում է հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 (երկու) օրինակից, յուրաքանչյուր օրինակ բաղկացած է 8 էջից և NN 1,2 և 3 հավելվածներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և տորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՀՀ պաշտպանության նախարարություն	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ «Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողտա 73Ա Երևանի թիվ 1 գանձապետարան
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011113223 ՀՎՀՀ 02522157	Հ/Հ 900018002254 ՀՎՀՀ 04724306
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺՊ
_____ Ս. ՊՈՂՊԻԿՅԱՆ	_____ Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ